

**ՏԵԿՏՈՆԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՕՐԱԿԱՆ ՎԱՐԻԱՑԻԱՆ ԵՎ
ՆՐԱ ԱՆՋԱՏՈՒՄԸ ԵՐԿՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ
ԱՐԵՎԱՕՐԱՑԻՆ ՎԱՐԻԱՑԻԱՅԻՑ**

© 2018թ. Ս. Ռ. Հովհաննիսյան

*ՀՀ ԱԲՆ Սեյսմիկ պաշտպանության Հյուսիսային ծառայություն
(Գյումրի 0015, Վ. Սարգսյան փող. 5ա Հայաստանի Հանրապետություն)
E-mail: hovsam@mail.ru.*

Հանձնված է հրատարակչություն 05.08.2016թ.

Ցույց է տրված, որ ՀՀ սեյսմաակտիվ տարածքում Երկրամագնիսական դաշտի արևաօրային և տեկտոնամագնիսական վարիացիաները հանդես են գալիս վերադարձված ձևով, ինչը խանգարում է թե՛ մեկի և թե՛ մյուսի առանձին-առանձին ուսումնասիրություններին:

Մշակվել է մեթոդ դրանք տարանջատելու համար:

Հանգուցային բառեր. տեկտոնամագնիսական դաշտ, արևաօրային վարիացիաներ, երկրաշարժեր, օրական վարիացիաներ, Արևի ակտիվություն, երկրաշարժերի կանխատեսում:

Հաստատված է, որ Երկրամագնիսական դաշտի (ԵՄԴ) փոփոխական բաղադրիչը հիմնականում պայմանավորված է Արևի ազդեցությամբ, որը դիտարկման ցանկացած կետում հաստատուն չի մնում Երկրի պտույտի և Արևի ակտիվության փոփոխության պատճառով: Օրական պարբերություն ունեցող այդ դաշտը հայտնի է որպես արևաօրային վարիացիա: Մահուն փոփոխությամբ դիտարկվող օրական վարիացիան կոչվում է կայուն (Sq), իսկ նրանից ամպլիտուդահաճախային անկայուն պարամետրերով տարբերվող վարիացիան՝ անկայուն (Sd) (Яновский, 1978): Նշենք, որ անկայուն վարիացիաների պատճառը հանդիսանում են Արևի վրա, ժամանակ առ ժամանակ դիտվող հրվիժակները, որոնց ստեղծած մագնիսական դաշտը Երկիր է հասնում մի քանի օրում, երբեմն ստեղծելով «մագնիսական փոթորիկներ»: Արևաօրային վարիացիայի կայուն կամ անկայուն վարքագծով օրերը նախօրոք որոշվում են Երկրի մագնիսականության և ռադիոալիքների տարածման ինստիտուտում (ИЗМИРАН РФ), որի տվյալների համաձայն մեկ ամսվա ընթացքում կայուն օրերի թիվը տատանվում է 5-10-միջև:

Վերջին 25 տարիներին մեր կողմից կատարվող փոփոխական դաշտի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համեմատած վերոհիշյալ ինստիտուտի տվյալների հետ, ՀՀ տարածքում, շաբաթվա ընթացքում, ակնհայտորեն մեծ քանակ են կազմում արևաօրային վարիացիայի անկայուն օրերը, որոնք, որպես օրինաչափություն, նախորդում են այն երկրաշարժերին, որոնց օջախներում կուտակված տեկտոնական լարումների ազդեցությունը մեծ է դիտարկման կետում (Оганесян, 2016): Դրան հակառակ փոփոխական մագնիսական դաշտի

արևաօրային հանգիստ վարիացիաների քանակը փաստացիորեն քիչ է և երբեմն էլ նման վարիացիա չի դիտարկվում մեկ տասնօրյակի ընթացքում: Այդ տեսակետից նշենք, որ նկատվում է ապատեղեկատվություն եղանակի տեսության հայկական հեռուստահաղորդումներում, երբ հայտնվում է գեոմագնիսական դաշտի կայունության մասին, այն դեպքում երբ փաստացի այդ օրը դիտարկվել է երկրամագնիսական դաշտի անկայուն վարիացիա:

Տեկտոնամագնիսական դաշտի (TE) օրական վարիացիաների (ST), ամպլիտուդահաճախային բնութագրերը շատ մոտ են (Sq) և (Sd) վարիացիաներին, ինչի հետևանքով վերջիններս հանդիսանում են բնական խանգարումներ TE դաշտի պարամետրերի գնահատման ժամանակ: Բնական խանգարումները չեզոքացնելու նպատակով մինչ այժմ, երկրաշարժերի տեկտոնամագնիսական նախանշաններն անջատելու համար օգտագործվել են երկրամագնիսական դաշտի օրական միջին արժեքները: Սակայն փաստացի նյութի վերլուծությունը ցույց է տալիս, որ TE դաշտի փոփոխման պարբերությունը կարող է տեղավորվել ժամերի մեջ (Оганесян, 2016): Հետևաբար անհրաժեշտություն է դառնում նրա վարքագծի ուսումնասիրությունը օրվա ընթացքում, ինչը հնարավոր է, եթե ունենանք դիտված (SH) վարիացիայից ներքին և արտաքին աղբյուրների ստեղծած վարիացիաները տարանջատելու մեթոդիկա:

Ներկայացվող աշխատանքի նպատակն է ցույց տալ, որ ՀՀ տարածաշրջանում ընդհանուր օրական վարիացիայի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն տեկտոնամագնիսական դաշտի վարիացիաները որոնք կարելի է համապատասխան մեթոդով տարանջատել արևաօրային վարիացիայից:

Վարիացիաների տարանջատման մեթոդը

Երկրի մագնիսական դաշտի փոփոխական բաղադրիչի կազմում դիտարկվող կայուն (Sq) և անկայուն (Sd) վարիացիաները ծնող արտաքին աղբյուրները հիմնականում կազմավորվում են իոնոսֆերայում: Այլ, ներքին աղբյուրներ, որոնք կարող են ստեղծել անկայուն փոփոխություններ արևաօրային վարիացիայի մեջ, ամպլիտուդահաճախային համարժեք պարամետրերով, ինչպիսին դիտվում է Sd վարիացիայի ժամանակ, դեռևս հայտնաբերված չեն:

Սովորաբար օրական վարիացիան ՀՀ տարածաշրջանի տարբեր կետերում դիտարկվում է նույնական տեսքով, անկախ նրա կայուն կամ անկայուն լինելուց: Բացառություն են կազմում այն կետերը, որոնք գտնվում են երկրակեղևի խիստ անհամասեռ էլեկտրահաղորդականությամբ գոտիներում (Оганесян 1990), որտեղ տեկտոնամագնիսական հետազոտությունների համար, որպես կանոն, դիտարկման կետեր չեն ընտրվում, ինչը պահանջվում է ընդունված հրահանգով (Головков В.П., Иванов Н.А., Пудовкин И.М., Шапиро В.А., 1977г.):

Հայաստանի Հանրապետության տարածքում, վերջին 30 տարիներին ԵՄԴ-ի ինդուկցիայի լրիվ վեկտորի մոդուլային չափումներից ստացված տվյալների վերլուծությունը վկայում է այն մասին, որ անկայուն օրական վարիացիան տարվա ընթացքում կրկնվում է ավելի հաճախ, քան իրականում Արևի ակտիվության փոփոխությամբ պայմանավորված անկայուն վարիացիան է, որը արտաքին փոփոխական դաշտի մասին մեր պատկերացումներին չի համապատասխանում: Ինչպես ցույց է տրված (Оганесян, 2016) աշխատանքում փոփոխական մագնիսական դաշտի անկայունությունը, որպես օրինաչափություն, նախորդում է երկրաշարժերին և դրսևորվում օջախների կազմավորման ընթացքում, հատկապես նրանց վերջնափուլերում, անմիջապես նախորդելով երկրաշարժի օրվան, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ դա հավանաբար պայմանավորված է երկրաշարժ կազմավորող օջախում և նրան հարակից երկրակեղևի տարածքներում ընթացող պրոցեսների հետ: Եթե նման ենթադրությունը ճիշտ է, ապա Sq-ի անկայունությունը երկրաշարժից առաջ պետք է, որ կապված լինի տեկտոնամագնիսական դաշտի (TE դաշտի) վարիացիայի (ST) հետ և հետևաբար ԵՄԴ-ի օրական վարիացիան իրենից պետք է ներկայացնի արևի և տեկտոնական լարումների ազդեցության հետևանք: Այսինքն դիտվող վարիացիան՝


$$S_H = S_q + S_T \quad (1)$$

որը փաստորեն ներկայացնում է, այսպես ասած, տեկտոնաարևային օրական վարիացիան: Այս պատճառով էլ Sq վարիացիա արտահայտության փոխարեն տրամաբանական է օգտագործել դիտարկվող S_H վարիացիա արտահայտությունը:

S_H-ից S_T-ն տարանջատելու համար անհրաժեշտ է ունենալ տվյալ սեզոնին, Sq-ին բնորոշ օրական կայուն վարիացիայի էտալոնային կոր: Նման կոր ստանալու հնարավորություն ընձեռնում են երկրաշարժին նախորդող այն օրերը երբ դիտվում է կայուն Sq վարիացիա և կայուն տեկտոնամագնիսական դաշտ (տեկտոնամագնիսական անդորր): Նկ.1-ում ներկայացված են նմանատիպ օրերի 2004թ.-ի ձմեռային սեզոնին և 2005թ.-ի գարնանային սեզոնին բնորոշ Sq-ի կորերը, որոնց սինքրոն արժեքների միջիններով կառուցվել են տվյալ սեզոնի համար էտալոնային կորերը (նկ.1, эталон):


ԵՄԴ-ի օրական դիտվող վարիացիայից՝ S_H-ից հանելով էտալոնային կորի սինքրոն արժեքները կստանանք այն դաշտի վարիացիան, որը պատճառ է դարձել Sq վարիացիայի աղավաղման համար:

Sq վարիացիայի սեզոնային բնորոշ կորեր ստացված են (Հակոբյան, 1975) աշխատանքում, որոնք վերաբերում են փոփոխական դաշտի բաղադրիչներին: Հիմքեր կան ենթադրելու, որ այդ աշխատանքում ներկայացված արևաօրային վարիացիաների ամպլիտուդը ժամանակի ընթացքում պետք է որ փոխված լինի իր մեծությունը, պայմանավորված արևային ակտիվության փոփոխության հետ: Այդ պատճառով Sq-ի և



Նկ.1 Երկրամագնիսական դաշտի կայուն օրերի կորերը ձմեռային, գարնանային սեզոններին և նրանց միջոցով ստացված համապատասխան էտալոնային կորերը:

ՏԴ-ի տարանջատման համար անհրաժեշտ է ունենալ ԵՄԴ-ի լրիվ ինդուկցիայի վեկտորի մոդուլի օրական վարիացիայի էտալոնային կորը կոնկրետ մեր ժամանակների համար: Այդ նպատակով ՏԽ վարիացիայի կորերից սինքրոն ձևով հանելով էտալոնային կորի արժեքները կստանանք տեկտոնամագնիսական դաշտի վարիացիան (նկ.2, ՏԴ կորերը): Ինչպես երևում է 24.12.2004-ին երկրամագնիսական դաշ-



Նկ. 2 Երկրամագնիսական դաշտի արևատայի վարիացիայի աղավաղման օրինակներ:

տի վարիացիան դիտվում է ալիքաձև, որի min-ը ի տարբերություն արևատային վարիացիայի 12:00-ին օրինաչափորեն տեղի ունենալու փոխարեն դիտվում է ժ. 16:00-ին: Ժամանակի մեջ օրական վարիացիայի min-ի նման անոմալ տեղաշարժը երբեք հնարավոր չէ բացատրել արտաքին աղբյուրներով, առավել ևս Արևի ակտիվության փոփո-

խությամբ: Այն բացատրվում է ՏԻ-ի ժ. 9:00-ից մինչև 17:00-ն 24ՆՏ մեծությամբ դիտվող թմբաձև փոփոխությամբ:

30.12.2004-ին դիտված դաշտի (ՏԻ) վարիացիան ամբողջապես հակոտնյա է արևաօրային վարիացիայի մասին մեր պատկերացումներին: Ժ. 12:00-ին դիտվող արևաօրային վարիացիայի min-ի փոխարեն դիտվում է maximum, որը ինչպես տեսնում ենք հետևանք է ՏԻ-ի ժ.9:00-18:00-ը դիտված 20 ՆՏ մեծությամբ թմբաձև փոփոխության:

04.05.2005-ի օրական վարիացիան աղավաղվել է ՏԻ փոփոխական դաշտի ժ. 9:00-ին սկսված թմբաձև փոփոխության պատճառով, որը տևել է մինչև ժ. 18:00-ն, ունենալով 50ՆՏ ամպլիտուդ: Այն ընդհատել է ՏԳ վարիացիայի ուղիղ բևեռացման օրինաչափ անկման գործընթացը, որի հետևանքով էլ ժ. 09:10-ից մինչև ժ. 18:00-ն ՏԻ դաշտում դիտվել է թմբաձև փոփոխություն: Ստեղծվում է տպավորություն, որ ՏԻ-ի աճը հանդիսանում է արևաօրային վարիացիայի հակադարձ բևեռացման թևը, որը իր մեծությամբ երկու անգամ գերազանցում է ՏԳ-ի (էտալոնային կորի) ուղիղ բևեռացման թևից:

Առավել մանրամասն վերլուծելու ժամանակ տեսնում ենք, որ ՏԻ դաշտում դիտվող փոփոխությունները թելադրված են ՏԻ փոփոխական դաշտի կողմից: Օրինակ՝ 04.05.2005թ.-ին ՏԻ-ի կորի մոտ ժ.01:55-ին գրանցվել է 5,79 ՆՏ մեծությամբ և 1,5 ժամ տևողությամբ թմբաձև վարիացիա, որը ակնհայտորեն հետևանքն է 01ժ.50ր-ին ՏԻ-ում գրանցված 8,64 ՆՏ մեծություն ունեցող թմբաձև վարիացիայի:

Առավել ինտենսիվ և խայտաբղետ են տեկտոնամագնիսական դաշտի ազդեցությունները դիտվող օրական վարիացիայի վրա 08.05.2005-ին: Ինչպես տեսնում ենք 0:00 ժ-ից մինչև ժ. 10:00-ն դիտված դաշտը (ՏԻ) և ՏԻ-ն ժամանակի մեջ ընթանում են սինքրոն փոփոխությամբ, որոնք ընդհատվել են ժ. (15:00-18:00)-ը: Այդ ժամանակահատվածում գրանցվել են մի քանի հարյուր ՆՏ-ի հասնող իմպուլսային արժեքներ, որոնք հետևանք են երկրակեղևի էլեկտրամագնիսական դաշտի ինտենսիվ ճառագայթման, ինչը բնորոշ է նախապատրաստված, 4 մագնիսոտուդով և դրանից բարձր օջախներին, սեյսմիկ հարվածից առաջ, նրանց վերջնափուլերում: Համաձայն սեյսմալոգիական կատալոգի (10.05-11.05) 2005 ժամանակահատվածում դիտարկվել է սեյսմիկ անդորր և հետևաբար տեկտոնամագնիսական անդորր, որին հետևել են 4,4 և 5,0 օջախների մագնիսոտուդներով երկրաշարժերը: 08.05.2005թ.-ին տեկտոնամագնիսական դաշտի դինամիկան ոչ միայն աղավաղել է ՏԳ-ի min-ի պահը, այլև տեկտոնամագնիսական դաշտի իմպուլսային բաղադրիչը իր բացարձակ արժեքների մեծությամբ (1000 ՆՏ) քողարկել է ՏԳ-ի արժեքները:

Նկարագրված գործընթացը միանշանակ բացատրվում է տեկտոնամագնիսականության և Ռեյդի տեսություններով (Nagata, 1969; Reid, 1911), որոնց համաձայն, սեյսմիկ հարվածից առաջ, դիտվում է տեկտոնական առաձգական լարումների անհամասեռ անկման պրոցես երկրաշարժի օջախներում և օջախային գոտիներում:

Կորերի ընդհանուր տեսքից (նկ.2) երևում է, որ S_к-ի և S_т-ի մոտ փոփոխություններն ունեն հակառակ նշան, որն արդեն գոյություն ունեցող բազմաթիվ փաստերի հետ (Оганесян, 2016) վկայում է S_т-ի դրական արժեք ունենալու մասին: Այդ բանը շատ ավելի ցայտուն երևում է երբ քննարկում ենք S_к և S_т վարիացիաներն առանձին օրերի համար, որտեղ ընդգծվում են այն բոլոր աղավաղումները, որոնք դիտվում են S_к դաշտում անմիջապես նախորդելով սեյսմիկ իրադարձություններին: Նկարից երևում է, որ S_к-ի կորերը խիստ տարբերվում են ՀՀ աշխարհագրական լայնությանը բնորոշ արևաօրային վարիացիաներից: Բացակայում են արևաօրային վարիացիային բնորոշ min-ի պահերը, կամ էլ տեղաշարժված են ժամանակի մեջ: Չեն առանձնանում ուղիղ և հակադարձ բևեռացման հատվածները, որոնք պարզ երևում են նկ. 1-ում:

Բազմաթիվ նմանատիպ դեպքերից նկ.2-ում ներկայացված չորս տիպային օրինակները ցույց են տալիս, որ տեկտոնամագնիսական դաշտի վարիացիայի պատճառով S_к -ում դիտվող բազմաթիվ օրերի նմանատիպ խիստ անկայուն ամպլիտուդահաճախային բնութագիրը, թույլ չի տալիս սեյսմաակտիվ տարածաշրջանում գրանցել S_q-ի, այդ տարածաշրջանի աշխարհագրական լայնությանը բնորոշ վարիացիան: Եթե այդ աղավաղումներին գումարվում են նաև երկրակեղևի էլեկտրամագնիսական ճառագայթման մագնիսական բաղադրիչի ազդեցությունները, ապա S_q-ի ամբողջական տեսքը ստանալը դառնում է բարդագույն խնդիր: Դա էլ հենց պատճառ է հանդիսանում սեյսմաակտիվ գոտում արևաօրային կայուն վարիացիայի (S_q) օրերի քանակի նվազման համար:

Այսպիսով ակնհայտ է, որ S_к-ի կորի տեսքը թելադրված է TE-ի S_т վարիացիայի վարքագծով: Տարբեր ժամանակներում նմանատիպ բազմաթիվ օրինակներ ցույց են տալիս, որ սեյսմաակտիվ գոտիներում միշտ չէ, որ հնարավոր է գրանցել S_q-ի օրական վարիացիաներն առանց աղավաղումների:

Արված վերլուծությունը ցույց է տալիս, որ Երկրամագնիսական դաշտում դիտվող փոփոխական բաղադրիչը՝ S_к -ը, սեյսմաակտիվ գոտում, մեծամասամբ, հանդիսանում է արտաքին փոփոխական դաշտի՝ S_q-ի և ներքին փոփոխական դաշտի՝ S_т-ի գումարային դաշտը: Չի բացառվում, որ նման օրինաչափությունը բնորոշ կարող է լինել ընդհանրապես բոլոր սեյսմաակտիվ գոտիների համար:

Եզրակացություն

Ամփոփելով այս աշխատանքի վերլուծության արդյունքները կարելի է ասել, որ ՀՀ սեյսմաակտիվ գոտում երկրամագնիսական դաշտի փոփոխական բաղադրիչը, ունենալով օրական պարբերություն, ամբողջությամբ չի ներկայացնում արևաօրային վարիացիան ինչպես ընդունված է մինչ այժմ: Այն հանդիսանում է երկու տարբեր դաշտերի գումար, որոնց աղբյուրները գտնվում են ինչպես իոնոսֆերայում (S_q),

այնպես էլ լիտուֆերայում (ՏԴ): (1) գումարի մեջ երկրորդ գումարելին իր մեծությամբ համեմատական է առաջինին, իսկ տեկտոնական ակտիվ գործընթացների ժամանակ նաև գերազանցում է նրան: (Տգ)-ի աղավաղումների ամպլիտուդահաճախային բնութագիրը հիմնականում թելադրված է ՏԴ-ի համապատասխան պարամետրերի ակտիվությամբ: Տարբեր ժամանակներում նկ. 2-ում ներկայացվածների նմանատիպ բազմաթիվ օրինակներ ցույց են տալիս, որ սեյսմաակտիվ գոտիներում միշտ չէ որ հնարավոր է գրանցել Տգ-ի օրական վարիացիաներն առանց աղավաղումների:

Առանձին-առանձին վերլուծելով աղավաղված օրերի վարիացիաները նկատում ենք, որ տեկտոնամագնիսական դաշտի կորերի ՏԴ ամպլիտուդները հակառակ կեսօրին դիտվող Տգ ամպլիտուդների $\sin$ -ների, ունեն $\max$ արժեքներ ժամը 8:00-ից 20:00-ի սահմաններում, որը ցույց է տալիս նրանց կախվածությունը օրական պարբերությունից:

Քննարկված բազմաթիվ օրինակներ ցույց են տալիս, որ սեյսմիկ հարվածից առաջ ՏԴ դաշտում ընթանում են մեծ ամպլիտուդով նշանափոխ վարիացիաներ, որոնք վերադրվելով Տգ վարիացիային դիտվող ՏԽ վարիացիայի մեջ ստեղծում են անհամասեռ, անկանոն փոփոխություններ:

Դիտվող գումարային փոփոխական դաշտը, ըստ նրա էության, կարելի է անվանել տեկտոնաարևային օրական վարիացիա և նշանակել SqT սիմվոլով:

Այս աշխատանքի գործնական արդյունքը հատկապես կարևոր է բժշկական ծառայություններին երբ անհրաժեշտ է որևէ միջամտություն կատարել հիպերտոնիկ, սիրտանոթային խնդիրներ ունեցող հիվանդների համար: Գեոմագնիսական դաշտի օրական վարիացիայի կայուն, կամ անկայուն իրական պատկերը կնպաստի ճիշտ կողմնորոշվել այդ հիվանդներին համապատասխան օգնություն ցուցաբերելու գործընթացի ժամանակ: Այդ տեսակետից կարիք է զգացվում համապատասխան ծառայություն ձևավորելու, որի կառուցվածքում պետք է համագործակցեն բժիշկներն ու երկրաֆիզիկները:

Ընդհանրացնելով ներկայացված նյութը կարելի է փաստել որ՝

1.Երկրամագնիսական դաշտում դիտվող օրային վարիացիան հանդիսանում է արևաօրային և տեկտոնամագնիսական վարիացիաների գումար;

2.Փոփոխական երկրամագնիսական դաշտի արևաօրային վարիացիան տեկտոնամագնիսական դաշտի օրային վարիացիայից տարանջատելու համար մշակվել է նոր մեթոդիկա;

3.Տեկտոնամագնիսական օրային վարիացիայի կորի ակտիվ մասը սկսվում է Ժ.09:00-ին և վերջանում 18:00-ին:

Շարադրվածը գործնականում առավել օգտագործելի դարձնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ՏԴ-ի ակտիվության և երկրաշարժերի օջախների պարամետրերի միջև հնարավոր ֆունկցիոնալ

կապը, ինչը թույլ կտա գնահատել վերջիններիս մեծություններն ըստ ST-ի ակտիվության չափի:

Հեղինակը շնորհակալություն է հայտնում Սեյսմիկ պաշտպանության Հյուսիսային ծառայության գլխավոր սեյսմաբան Հ. Վ. Սարգսյանին սեյսմիկ տվյալները սիրահոժար կերպով տրամադրելու համար:

Գրականություն

- Акопян Ц. Г., Ахвердян Л. А. 1975, Солнечно-суточные вариации и их гармонический анализ по данным магнитной станции «Гярд». Изв.АН АрмССР, Науки о Земле, 4, с.64-71.
- Головков В.П., Иванов Н.А., Пудовкин И.М., Шапиро В.А. 1977, Инструкция по поискам и изучению аномалий векового хода геомагнитного поля. Москва, с.24.
- Оганесян С. Р. Тектономагнитный метод прогноза землетрясений. 2016, Изд. Lambert, Saarbrücken, p.432.
- Оганесян С. Р. Локальные аномалии геомагнитного поля как возможные предвестники землетрясений. 1990, Изд. АН АрмССР, Ереван, с.147-161.
- Яновский Б. М. Земной магнетизм, 1978, Изд. Ленинградского университета, с.385-386.
- Nagata T. Tectonomagnetism Int. Assec., Geomagnetism and Aeronomiya, 1969, Bull. 27, 12.
- Reid H.F. n.v. Califor. Publ.Dapt.Geol., 1911, 6, 413.

Գրախոսող՝ Մ. Հովհաննիսյան

СУТОЧНАЯ ВАРИАЦИЯ ТЕКТОНОМАГНИТНОГО ПОЛЯ И ЕЕ ОТДЕЛЕНИЕ ОТ СОЛНЕЧНОСУТОЧНОЙ ВАРИАЦИИ ГЕОМАГНИТНОГО ПОЛЯ

С. Р. Оганесян

Резюме

Показано, что в нашем сейсмоактивном регионе солнечносуточная вариация геомагнитного поля и вариация тектономагнитного поля проявляются суммарно, что мешает их изучению в отдельности. Разработан метод их разделения.

SEPARATION OF TECTONIC MAGNETIC FIELD DAILY VARIATIONS FROM GEOMAGNETIC FIELD SOLAR DAILY VARIATIONS

S.R.Hovhannisyan

Abstract

The article shows that the geomagnetic field solar daily variations and the tectonic magnetic field daily variations appear summarily in our seismically active region, which hinders their study in isolation from one another. A method of their separation is developed.